



ՐԱԺԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շուրեկան 10 ձր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի հա-
մար շուրեկան 12 »
Վեցամսեայ 6 »
ԿԱՆԻՍԻՎ ՎՃՃՐԵԷԻ
—)(—
Գրութիւնք եւ չնն զրույր
—)(—
Դրանոցման տղր 20 սան-
րիւն եւ Լոնֆին աւելի ան-
գամներու համար 20 Օ10
գիւղ կը շարժայ :

ՇԱՐՋՈՒՄ

R. P. Kalémkarian
(Antriche)
Melchitharistangasse W. 4
Vienna

Նամակ եւ գրամ որկէշ
Խմբ. գրութեան հասցիին
—
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒՄ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄՈՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊՍՏԱՍԽԱՍՏՈՒ 3. ԱՄԻՔԻԱՍԵԱՆ

ՍՄԱՍՈՒԼԻՆ ԴԵՐԸ

Սեր ազգը՝ դարերով սպրտած արեւելքի ամենէն կոպիտ, ամենէն վայրագ ցեղերու կամայականութեանց ներքեւ, շատ բան կորսնցուցած է իր կորովի նկարագրէն, իր ազնիւ ձգտումներէն : Եւրոպայէ շատերը որ մեր սէրը եղան անցեալին մէջ, եւ անոնք որ դեռ մեզ կը շարժրկեն ներկայիս մէջ, մաքուր, օրինակելի բան մը չի փոխանցեցին մեզի : Իրենց ազտոտ բարքերով թունաւորեցին մեր սպրտած միջավայրը, փաստակար միքրոպներ մեր ուժով կաշմուածքէն ներս սպրդեցան, կերան ու թուլցուցին անոր հիստածքները, եւ մենք քիչ քիչ իւրացուցինք յոսի բնաւորութիւններ եւ ունասունի բնազդներ :

Հայրենիքին մէջ հայ վաշխաւուն ու կապալաւուն, թորք ուտիկանին ու քորք ասպատակին հետ ձեռք ձեռքի տուած կը կողոպտեն ու կը քերթեն աղքատ ու աղէտ ամբողջ, քահանան ու բէտը՝ գայմագամին ու միւտիքին պէս՝ ժողովուրդը կը բռնադատեն իրենց բռնահոյքին ծառայելու : Անոնք իսկ արտասահմանի հայ համախմբութիւններու մէջ գեաորքան գերակշիւ ազդեցութիւն ունին ինկած բարքերը : Բամբասանքը, չարախօսութիւնը, չկամութիւնը :

Ասոնք բռնապետական բէտիմին բնական հետեւանքն են, եւ եթէ ուրիշ շատերու պէս՝ մեր ազգն ալ վերջն սկանապէս չի լուծուեցաւ, չի սպառեցաւ տիրող սպականութեանց մէջ, այդ իր նախնական սմուր նկարագրին վերագրելու է :

Այսօր մեր նոր սերունդը աւելի առողջ բմբռնումներով սնած եւ աւելի մաքուր սկզբունքներով ստաշնորդուած, բաւական յոյս կը ներշնչէ, թէ հայր իր վրայէն թօթուելով եկամուտ ազատութիւնները ու ջնջելով բռնութեան թողած արատները, կարող պիտի ըլլայ իր տեղը գրաւել ազդերու շարքին մէջ եւ իր պատմական

գերը կատարել : Բայց հասնելու համար այդ վախճանին, դեռ երկար գնացք մը, տաժանելի վերելք մը ունինք կատարելիք, եւ եթէ նախապէս չի ջանանք զմեզ ամբողջովին ապանելու, կրնայ ըլլալ որ սոժապառ ինչանք կէս ճամբան :

Հայ մամուլին առաջ պարտականութիւններէն մէկն է ժողովուրդին մէջ բոլոր գրած այդ հիւստիւթիւնները քննել ու մէջտեղ դնել, եւ անոնց դարմանները ներկայացնել :

Եւ ստոր համար պէտք է կռիւ մղել, կռիւ հինցած նախապաշարութեան դէմ, կռիւ արմատացած շարիքին դէմ :

Շատ հեշտ դործ է ամբողջին առաջն անցնել, անոր անարամբան եւ շատ անգամ անիմաստ սպառակին արձագանգն ըլլալով, կեղծ ժողովրդականութեան մը սին երաշովը պարծենալ : Հրապարակագրի նախնական պարտականութեանց դէմ կը մեղանշեն անոնք որ ստոր կամ անոր հաճելի ըլլալու համար եւ կամ այսինչէն կամ այնինչէն վրէժ լուծելու համար, էջեր կը մրտանեն, դէպքեր, դրուածքներ կը խեղաթիւրեն : Իսկ բոլորովին արգահատելի են անոնք, որ առանց հասկցած ըլլալու մամուլին նշանակութիւնը, պատահամբ հրապարակի վրայ գտնուած են, եւ ամէն փշած հովի գլուխ ծռելով իրենց իւրաքանչիւր քայլերուն կը հակասեն եւ ժամ առաջ թերթներուն «մամուլին գանէն» դուրս ելլելուն կը սպասեն :

Նեղ վայրկեաններու, փոթորկալից ճգնաժամներու մէջ է որ ամէն առնէն սուլի պէտքը կը զգացուի անխորհրդաւ եւ ուժով ձայնի մը, որ փոխանակ տիրող հոսանքէն մղուելու, ինքնստեղծ ամբողջ առաջնորդէ չի տակ ճամբան :

Իժուար դործ է ստորով հետեւ օրորներով ժողովուրդը քննելու եւ կամ զովասանքներով աչք մը անել փորձելու չի նմանի : պէտք է ընթերցողին երեսն ի վեր պոռալ, իր թերութիւնները հատիկ

հատիկ պարզել անոր, եւ ստոր համար մտաւոր անհրաժեշտ պաշար ունենալէ զատ, պէտք է սոժապառ ըլլալ տոկոսն նկարագրով մը, եւ կարող ըլլալ ընդհանուրին օգուտին տոջիւ մտնալ անձնական պաշտիկ մղալիկ հաշիւներ եւ զսպել կողմնակի հակումներ :

ՎԱՀՍԻ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԱՒԱՆԴԱՍՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՍԷՋ

Մեր լուսաճող պատուելիներու ժամանակ մանուկները կը կրթին ասոնց անոնց մտաւոր ու հոգեկան կարողութիւնները նկատի առնելու : Կուսուցանելին ասոնց որոշ ծրագիր, բարոյական մասնաւոր ուղղութիւն եւ գտնաւանդութեան յատուկ մեթոտներ ունենալու : Այդ բարի ժամանակներու մարդիկ կը սորվեցնէին որքան, ինչ չափով ու ինչ եղանակով որ կրնային կամ կուզէին, ասոնց բանի մը մասին կասկածելու կամ մտահոգութիւն կրելու : Մեր այս օրուան ուսուցիչները սակայն կուզեն ցոյց տալ թէ իրենց կատարելիք պարտականութեանց ամբողջ ծանրութիւնը կը կրեն, եւ այդ պատճառաւ, յազուադէպ մը կը թուին ունենալ ձգտումներ, պարտականութեան մը մը իրենց իրենց մէջ եւ իւրաքանչիւր հանդիպումի մտածումով, խորհրդածութիւնով ընել կը փափաքին, որպէս զի իրենց պաշտօնին զխակից եւ իր ճամբար մարդը հանդիսանան : Բայց իրապէս, ե՞ն արդեօք այն ինչ որ կուզեն ըլլալ կամ երեւիլ : Շատ քիչ բացառութեամբ մեր ուսուցիչները արդեօք չեն խաբիր զմեզ : Դպրոցի նշանակութիւնն ու կարեւորութիւնը հիմայ աւելի լաւ բմբռնուած ըլլալուն համար, մեր վարժապետները արդեօք չեն ջանար իրենց ծրագրերուն խոստումներով մեր աչքերը շարժել, որպէս զի իրենց խեղճութիւնը այդ կերպով կարենան ծածկել : Այդ բոլորի մասին եւ միշտ կասկածած եմ : քանի մեր կրթական խնդրով հետաքրքրուած, մեր ուսուցիչներն ու վարժատուները մտան ճանչցած եմ, զժողովուրդը իմ կասկածներս ա՛յնքան աւելի հիմ գտած ու մասամբ ալ համոզումի փոխուած են :

Այսօր ասոնց քննարկի վայժարան մը գծուար է գտնել, գրեթէ չունինք : Բայց այդ չի նշանակել թէ պատուելիներու դարը վերջացած է ար-

դէն, թէ մենք մեծապէս յառաջադիմած ենք, այնպէս որ մեր ազոց կրթութեան ու դաստիարակութեան գործը այլեւս կամայականութեանց թողուած չէ : Կրնանք ըսել թէ մեր ամէն մէկ վարժարանի մէջ առաւել կամ նուազ ճոխ ծրագրերն ունենան : Եւ համար, աւանդուելիք ծանօթութեանց քանակն ու որակը, ուսուցման արամբանական եւ գիւրիւն եղանակները, ազոց մտաւոր կարողութիւններն պարզացնելու եւ անոնց ամենէն առողջ եւ օգտակար բարոյական ուղղութիւնը տալու միջոցները, իւրաքանչիւր կարգի ու հասակի համար, կենսաւ խորհուած է ու կը գործադրուի : Ո՞վ չգիտեր թէ մեր վարժարաններու համար պատրաստուած ծրագրերը շատ քիչ բացառութեամբ մեծաւ մտնալ տուած կը մնան, որովհետեւ իր ուսուցիչներէն գրեթէ եւ ոչ մէկը իր աւանդելիք դասերը կանխաւ բաժնած ու պրած ունի, որպէս զի գիտնայ իր պատասխանութեանց նիւթը կազմող փոքրաթիւ բայց հիմնական ծանօթութեաններն աստիճանաբար ու մեթոտով աշակերտներուն սորվեցնել, եւ իւրաքանչիւր դասը աղուն հոգեկան ու մտաւոր կարողութիւնները զարգացնելու միջոց բնել : Մեր մէջ ընդարձակ ու ճոխ ծրագիր մը ունենալը սովորութիւն մը, զարդ մը համարուած է : շատ քիչը անոր իսկական նշանակութիւնն ու կարեւորութիւնը զգացած են, շատերն այն իսկ զպրոցի պաշտօնն ու նպատակն ալ չհասկնալով կը կարծեն թէ աղան ծանօթութեանց շահմարան մը ընելը, անոր յիշողութիւնը ծանրաբեռնել եւ հետեւաբար մտքի միւս կարողութիւններն ալ խանգարելը մեծ արժանիք մըն է : Այս պատճառաւ է որ սմանք իրենց յանձնուած փոքրիկներուն շարք, հինգ լեզուներով պիտական, դրական ու վաճառական կրթութիւն մը ալ կը խոստանան իրենց ծրագրով : ուրիշներ, ալ աւելի համարձակ, ի ձայն փողի ու սրինգի, հպարտութեամբ կը յայտարարեն իրենց աշակերտներուն արդէն շատ բան սորվեցուցած ըլլալին : Հոս անզը չէ այդ կարգի պոռոտախօս պարոններու յայտարարութեանց ճշգրութիւնը եւ խօստումներու անկեղծութիւնը քննելու, բայց ասոնք արդէն ինքնին փաստեր են ապացուցանող թէ մեր զբոսացիներու կրթական ծրագրերը ոչ միայն պարունակութեամբ, բարոյական ոգով եւ ուղղութեամբ մեղմեցնելէ անգործ տարբերութիւն ունին, այլ նաեւ խիստ թերի եւ անկատար կերպով պատրաստուած են, քանի որ ծրագրի իսկական նշա-

նակութիւնն իսկ դեռ շատեր հասկըցած չեն, ու խիստ հազուադէպ բացառութեամբ գրեթէ եւ ոչ մէկ տեղ եղածները կէտ առ կէտ կը գործադրուին: Մեր սուտ ցիւցիւնը ուրեմն, չնայելով որ լոկ ձեւակերպութեան համար ծրագրեր կը մշակեն, մեթոտներու ընտրութիւն մը ընել կը թուին, դեռ թանձր աւանդականութեան մը գերին են, ու կը շարունակեն դեռ պատուելիական անդիտակցութեամբ, առանց որոշ ու կանոնաւոր յատակագրի եւ ուղղութեան, մեր զաւակները կրթելու եւ դաստիարակելու յաւակնութիւնն ունենան: Թերի սխալ ըմբռնումով պատրաստուած եւ շատ յոռի կերպով գործադրուող ծրագրերն՝ օգտակար ըլլալէ աւելի վնասակար են, այդ պատճառաւ կրնանք ըսել թէ մեր մատաղ սերունդը, կրթելու, եւ ապագայ հայութիւնը կազմելու նպատակ ունեցող մեր վարժարանները զեկէ ու կողմնացոյցէ զորիկ նստելու կը նմանին եւ երեւութապէս միայն կը տարբերին քառասուն, միւսուն տարիներ առաջուան պատուելիական ատենի վարժարաններէն:

Երբ անգամ մը համոզում գոյացնենք թէ մեր կրթական ծրագրերն լոկ ձեւակերպութեան համար գոյութիւն ունին, դիւրին է ենթադրել այն բոլոր վնասակար եւ աւանդական սովորութիւնները որոնք մեր վարժարաններու մէջ կը զբաւնեն եւ որոնց գլխաւորները պիտի յիշտասկեմ յաջորդ յոգնածով մը:

Կ. ՊՈՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 18 Փետր.

Հակառակ Պատրիարքին յայտարարութիւններուն եւ հառափարակութեան դէպի Հայերու բարեացակամ երեսօթիւն, միշտ մեր իրաւունքներն են որ կը սեղմուին:

Այսօր Պատրիարքարանը զբաղեցնողն է «իմութեամբներու խնդիրը»:

Այլ ասկէ ետքը ինչ վկայագիր որ ըլլայ, թողին թուրք իմամն ու միտտարը պէտք է վաւերացնեն իրենց կնիքներովը: Օրմանեան բան մը չի կրցաւ ընել աս Սուլթանական որոշումին առաջն առնելու համար, եւ անոնք որ ներկայ Պատրիարքին եւ վարչութեան օրով դեռ կը սպասեն որ երեսի վրայ մնացած աւելի ծանր խնդիրները նկատողութեան կառնուին, պարզապէս յիմարութիւն կընեն:

Եթէ այս թոյլ ընթացքը շարունակէ այսպէս, թերեւս քիչ ժամանակէն Պատրիարքարանին մէջ ալ, եկեղեցիներուն մէջ ալ իմամներ ունենանք, որպէս զի Պատրիարքին եւ քահանաներուն հետ իրենց վկայութիւնը տան ու եւէ վկայագրի մը կամ խնդրի մը համար:

Հարկաւ իմացած ըլլալու էք որ Պատրիարքը պայրամի առթիւ Սուլթանին շնորհաւորութեան զնաց ժողովուրդին կողմէն: Բայց քաղաքիս թերթերը լռեցին Պատրիարքին մէկ շարաթուան մէջ

չորս անգամ պալատ երթալու մասին:

Նաեւ իմացած էք անշուշտ որ Մեղքոն Կիւրճեան Գաթիկոսոսի արտորուեցաւ, հինգ ամիս բանտը մնալէն ետքը: Այսօր Պոլսոյ բոլոր հայութիւնը զգուանքով լեցուած է Պատրիարքին դէմ իմանալով որ արտարել տուողը ինքը Օրմանեանը եղած է: Կերեւի թէ հին անձնական խնդիր մը կայ եւ զեր մէջերնին (*): Ինչո՞ւ չի թէսարքֆ Էնվէր պէյ որ քանի մը բարեկամներու խնդրանքին վրայ միջամտած էր եւ մեծ յոյս ունէր Կիւրճեանը ազատելու, Օրմանեանի հանած գժուարութեանց առջեւ չէ յաջողեր եւ սպէս յայտարարեր է:

«Կիւրճեանի միակ թշնամին, որ մինչեւ իսկ արտարել պիտի տայ, Պատրիարքն է»:

Ահա Օրմանեանի պաշտօնական մարդէն ետքը ներքին մարդը:

Մենք թէ՛ւ մայրաքաղաքին մէջ բան մը չենք գիտեր, բայց կը զուշակենք որ երկրին ներսերէն բաներ մը կը դառնան, օրը երբ անգամ շինուոր կը զրկուի դուրս վահօններով, եւ զացողներուն փոխարէն ալ թռչնը նորեր կը բերէ դուրսէն, որոնց կէտէն աւելին վիրաւորուած են, զինուոր, պաշարուող մեծ մասամբ ալպանիացի:

Ժողովուրդին մէջ շատ զրոյցներ կը պտտին, բայց լրագրիները բան մը չեն գրեր. ամէն հիւանդանոց լեցած է, մինչեւ անգամ Խաղկի Գումպազհանէի հիւանդանոցը: Մակեդոնիան կրէտէին «տառօսդին եկաւ ինչ եղաւ: Կարծեմ թէ կառավարութիւնը «տակը» ըլլալուն «իլավէ» չի հանէր կոր:

Պոլսոյ կայսրութիւնը շատ զէշէ, քաղաքը ողողուած է ծպտեալ սուտիկաններով. ապահով ըլլալու համար, պէտք է քայլերդ հաշուով առնես, բնաւ ձայն չի հանես եւ մարդու երես չի նայիս: Գաղտնիք մը տուած ըլլալու համար պղտիկ դէպք մը պատմեմ: Յոյն խանութպան մը խանութը գոցելով սրճարան մը կերթայ: Ծանօթները կը հարցնեն. — Ինչու՞ խանութդ գոցեր ես, Յոյնը կը պատասխանէ.

— «Ատամ արքսութա եօզ նէ եաբալըմ»:

Ներկայ գտնուող ծպտեալ մը, անմիջապէս դուրսէն փոխի բերելով մարդը կը հրեն կը սանին. երեսին պոռալով:

— «Ինքիբ, արքսութա եօզ նէ տէմէք, սաէի շահանէտէ կէշիւիյօրմ, պէրէքեաթ վերսին տիյէճէյիւնէ, հա՛, օրթալըը հեփ ֆեսաաա վէրէսին... հա՛, տէ՛ իւրլու»:

(*) Կերեւի թէ Օրմանեան չէ մոռցած Հրանդի Մաւիսի մէջ գրած Սրբազանիկ ժպիսը...

Մարդը դեռ «Ձապթիէ խափուսին» է:

Եէնիչէրիութեան դարուն մէջ կապրինք:

Գումպազհանէի (Խաղկի) զօրանոցին շրանկիւրներուն պետը, որ վերջին դէպքերուն ժամանակ իր գործը տեսած էր. վերջերս ճամբայ կելլէ իր երկիրն վերադառնալու: Մաքսատան մէջ կը խուզարկուի եւ 60—70 կտորէ աւելի պղինձ սաներ եւ անօթներ կը գտնուի քովը ու կը գրաւուի, որոնց վրայ հայերէն արձանագրութիւններ կային:

Կառավարութիւնը ստոնք գրաւեց բայց չի ջանաց տէրերը զտնելով անոնց վերադառնել:

Չի մոռնամ յիշելու նաեւ որ ստար նամակատանց վրայ խիստ հակողութիւններ կան. եւ ծպտեալները նամակատուն մտնող ելլողները շատ անգամ կը խուզարկեն:

Ա.Ղ.Ղ.

Փ. Պոլիս, 19 Փետր.

Սուրբ Գէորդ եկեղեցիին բանտարկեալը տակաւին կը մնայ նոյն վիճակին մէջ: Նորաթմեր եւ սմիւններ անցան իր ծանօթ շահատակութեան յետոյ, սակայն տակաւին ոչ մէկ հրաման կուգայ թէ խեղճ բանտարկեալը ինչ պէտք է ընէ. մեկնի՞ թէ յուսարից սպասէ Պատրիարքարանի հրահանգներուն: Միւս կողմէ ժողովուրդը կը սուտէ ամէն կերպով: Թողունք բարոյական անազին վնասը զոր կը պատճառէ Սրտէն վարդապետի ներկայութիւնը, թողունք այն բարոյական քաջալերութիւնը, որ կը ստանայ աւազակներու խումբը. աղղը նիւթապէս ալ կը տուժէ: Աղղային երեւութաբար խանդարուած է ամէն ժամանակէ աւելի, եկեղեցի ոչ ոք կը յաճախէ եւ բանկալը կը վճարէ ամէն շաբաթ Սրտէն վարդապետի եւ անոր անօթի ընկերներուն խմած պատուական օդիններուն եւ զինիններուն եւ կերած փառասոր ճաշերուն վոխարէնը: Հրոստարուած թաղական խորհուրդը արգիլած էր բանկալին հինգ սանթիմ անգամ վճարել Սրտէն վարդապետի հաշոյն: Բայց իրմէ ընտրուած մէկ անգամը որ գանձապետի պաշտօն կը վարէր, մտիկ չըբաւ զինք ընտրող մարմինին հրամանին եւ առանց իր ընկերներուն հաւանութիւնը ստանալու, վճարեց մեծ կակ գումարներ Սրտէն վարդապետի անհատում հաճոյքները գոհացնելու համար: Ի դուր երիտասարդութիւնը կազմակէ թէ անոնք որ բերել տուին այս վարդապետը Փ. Պոլսի մէջ խուսովութիւն յարուցանելու համար, թող իրենց տունը տանին եւ գոհացում տան անոր բոլոր փափագներուն: Բանկալի այդ պաշտօնեան որ աւազակներու խումբին ամենէն յարգուած եւ վստահելի

ընկերն էր եւ այդ պատճառով կոչուած էր բանկալին մէջ պաշտօնավարելու, մտիկ անգամ չընէր: Սակայն թո՛ւ լաւ գիտնան թէ այդ հին մեթոտները ա՛լ չեն անցնիր Փ. Պոլսի մէջ: Երբ երեսուսարգութիւնը նոր թաղական խորհուրդ մը ընտրէ, անոր առաջին գործը պիտի ըլլայ վոնտեւի բանկալին այդ զեղծում գործող պաշտօնեան եւ տուժել տալ Սրտէն վարդապետի անունով ծախսուած բոլոր գումարները: Այն ժամանակ պիտի համոզուի այդ խմբակը թէ իրենց համար հաց մնացած չէ աղղային գործերու մէջ:

Ֆէլիքս Պոլի համար հոգեհանգստեան պաշտօն մատուցուած ժամանակ Լատիններու Ա. Լուսովիք եկեղեցիին մէջ, մեր մէկ բանաստեղծը որ միանգամայն կալուածատէր ընդ աղայէ, զլիարկը գլուխին վրայ կոխած, բերանը փակելի կտորներ թի՛մած, ման կուգար եկեղեցիին մէջ: Գրադէտ-աղայի մը այս կոչու վարմունքը շատ զէշազգեցում թիւն ըրած է օտարներու վրայ, բայց ոչ ոք այնչափ յառաջ գացած է որ ստիկաններու միջոցով դուրս նետէր զայն: Մեր հարուստներէն սմանք շատ անքաղաքափար եւ խիստ ընթացք ունին սրճարաններու եւ հասարակաց վայրերու մէջ եւ արատ կը բերեն աղղային պատիւին, սակայն չէինք կարծեր թէ օտար աղղի մը պատկանող եկեղեցիին մէջ, այս բանաստեղծ-ընչը այնքան անվայել ընթացք ունենար: Բայց եթէ այդ փորձը կրկնէ մեր եկեղեցիին մէջ, չենք կարծեր թէ կարենայ անպատիժ մնալ հակառակ իր բանաստեղծ-կալուածատէրի համբաւին:

Լիլի քստմնելի ոճիքը անգամ մըն ալ կը յայտնէ մեր դպրոցներու բարեկարգութեան անմիջական պէտքը: Հոս ալ Լաթուրիք քահանաները դպրոցներ բացած են, որոնք չենք կարծեր թէ Լիլի դպրոցներէն տարբերութիւն ունենան ամէն տեսակետով: Իրժեպաղաքար մեր սղղային դպրոցի արգահատելի վիճակին պատճառով բազմաթիւ հայ աղաքներ եւ աղջիկներ կը յաճախեն այդ դպրոցները բարոյապէս եւ մասուորապէս փթանալու համար: Գիւրիւն է ծնողներու աղղասիրութեան եւ բարոյականութեան կոչում ընել իրենց զաւակները հեռու պահելու այդ վայրերէն, բայց պէտք է վարժարան մը ցցունել որ աղղային ըլլալով հանդերձ, գէթ դպրոցի երեսօթ ունենայ, եւ ուր կարելի ըլլայ զարգացում գտնել: Ո՞վ պիտի ստեղծէ զայն, եթէ ոչ ժողովուրդը: Պատ. Հայկ Թարաթմեան հոս էր եւ իր գաղափարները տարածելու մասին ա-

մէն ճիգ չի խնայեց : Վարդ կըր- նայ վարժարան մըն ալ բանալ ազգին նոր փորձանք մը ըլլալու համար, ուր միտմիտական հակա- ազգային նեխած գաղափարներով սնած նոր սերունդ մը յառաջ պիտի բերէ : Այս ամէն վտանգ- ներուն առջեւ առնելու միակ միջոցն է զպրոց անունին արժա- նի նոր մեթոտներու համաձայն ազգային վարժարանի մը գոյու- թիւնը :

ՎՍՈՒՍՅՈՒ ՍՁԳՍՅՈՒՆ
ՎՍՐԺԱՄԱՆԻՆ ՇՈՒՐՁ

Այն զժողովուրդներն ու գան- գառները որոնք յաճախ մամուլին միջոցաւ արտայայտուեցան Պոլիս- րիոյ վալժարաններու սղորմելի վի- ճակին վրայ, անօգուտ չեն մնացած բարեբախտարար : Ամէն հայ անհաս որ քիչ շատ սկսած էր հետաքրքրուիլ իր նոր իրականութիւնը, զգաց ազգ. վարժա- րաններու բարեփոխութեան, փոր- ձառու, եռանդուն ու պարտաճանաչ ուսուցչներու պէտքը եւ աշխատե- ցաւ հոգ տանիլ զանոնք լրացնելու : Այս փոփոխութիւնները սակայն, թէեւ իրենց սկզբնաւորութեան մէջ, առանց ազմուկի ու կոտի չէ որ կա- տարուեցան : Հոս չի պիտի յիշատա- կեմ այն անխիղճ մեքենայութիւն- ները զորս, Պոլիսրիոյ ամենամեծ քաղաքներուն մէջ, չի վարանեցան սարքելու, իրենց դարձուր նախա- պաշարուներուն մէջ քարացած, ե- սամով, փթած ինչ որ զլուսնիւր, ազգ. վարժարաններու բարեկարգու- թեան նախանձախիղճ անհատներու դէմ : Հինցած, բորբոսած պատուե- լիներն ալ դեռ կը յամառին ստպա- րկէն քաշուելու :

Եւ սակայն գանձուցան մաս մը հոգաբարձուներ որոնք քաջու- թիւն ունեցան արձամարձելու ամէն անհասական հաշիւները, եւ իրենց ուսուցչական ընտրութեանց մէջ ա- լելի խնամք տանելով, գիտակից ի- ինց անկարողութեան, չուզեցին այլեւս բունտալ իրենց ընտրածնե- րուն ու զընթացն ու խղճին վրայ : Այս անսակ հոգաբարձուներու մէջ, իր նախաձեռնութեամբ զլուսնուր տեղը կը բռնէ վառնայի հոգաբար- ձու թիւնը : Ով որ առիթ ունեցած է, անցեալ սեպտեմբերէն ի վեր այցելու- լու Ազգ. վարժարանը, խեղճ զգու- ցած է անշուշտ այն բոլոր աշխա- տութիւններն ու այն բոլոր զոհողու- թիւնները զորս, հոգաբարձու եւ ու- սուցիչ, հակառակ վարժարանին ա- մենանձուկ պիտեմէին, ձեռք ձեռքի տուած, կը կատարին ազգային կըր- թական տպար հաստատութիւն մը պահելու համար :

Նախնական կրթութեան համեմա- ծրագիր մը, իր բոլոր կէտերով գոր- ձադրութեան մէջ է հոս : Հայերէն լեզուն, ազատած իր գրաբարի ամուլ խճողութիւնէն, անձուռնի հասարակու- ներու ընթերցումէն, կաւանդու ի ա- չակերտներուն մտաւոր մակարդակին համապատասխանող, եւրոպական կամ ազգային հանդիսներէ ու գրքերէ առ- նուած կտորներու վրայ զորս մանրա- մասնօրէն կը բացատրէ ուսուցիչը, ցցունելով միանգամայն այն ընդհա- նուր մտածումը որ կը տիրէ այդ գրու- թեան մէջ : Ոչինչ աւելի հաճոյք կը պատճառէ այցելուի մը քան այն սե-

սարանը ուր աշակերտ եւ ուսուցիչ վիճարանութեան բռնուած կըլլան գաղափարի մը շուրջը : Գոտափօտու- թիւնը կը գողրի այլեւս պարզ քե- րականական կամ բառապատկան հարց-պատասխաններու ձանձրանալի սուրբուտ մը ըլլալէ, սգեւորութիւնը կը տիրէ գաղափարին մէջ, աշակերտը զովիլի հասարկութեամբ մը իր բո- յոր ուժերը կը հաստէ նոր փաս- տեր, նոր իրողութիւններ մէջ, քեր- լու, իրր հաստատութիւն իր պաշա- պանած գաղափարին : Այս խօսակ- ցութիւնը աշակերտին համար շատ նպաստաւոր է : Աւրախութեամբ տե- սայ որ, աշակերտները սկսած էին բաւական ծանօթանալ գարուս ամե- նէն նոր գաղափարներուն, ըմբռնել ընկերական կազմակերպութեան ան- հարթութիւններն ու անխրաւու թիւն ներքէ որոնք կը գործուին նիւթական կոպիտ ուժին միջոցաւ :

Բայց ինչ որ ամենէն զովելին է այս վալժարանին մէջ, այն է կրթա- կան գաւառին տրուած նախապա- տուութիւնը : Եստով տեսած էր մեր կարգ մը պոլիտարանայ նախակրթա- րաններուն մէջ զիտութեան պուրկա- րեղէն լեզուով աւանդուիլը : Այս գաղափարակիր ուղղութիւնը, որ իրր թէ կրթութեան աշակերտ պատրաս- տելու ծիծաղելի գիտումն ձեռն է, շատ վնասակար կը զած է հայ աշա- կերտներուն որոնք առաջին քայլե- րէն զժողովուրդներէն քաղելով, զգուած են ու չեն զգացած գիտու- թեան պէտքը :

Ամբողջ հասարակ մը գտալ վառ- նայի վալժարանին միջ մարդկային գանկերու, կենդանիներու, խեցի- ներու, հանածոներու, զանազան սե- սակ քարերու զորս աշակերտները պատրաստած էին իրենց ուսուցչին թիւղորութեամբ : Մասնակը այժմէն իսկ առած է գիտութեան ճաշակը, զգացած է անոր պէտքն ու օգու- տը : Եւ մանաւանդ երբ գիտական զուարճալի փորձերու ժամը գայ, ա- շակերտին ամենէն սիրած բանն է : Իրեն համար բոլորովին նոր ու ան- հաստատի հրաշքեր են տեսածները, կուղէ անոնց պատճառները փնտել, կրկնել նոյն փորձերը, իր գաղափու- թիւնը կը զարգանայ, իր մէջ կը ծնի զննող սրբին, որ այնքան անհրաժեշտ է կեանքի մէջ :

Ու ամբողջ գաղափարութիւնները, ուսուցչիչներու, բոլոր ջանքերը միակ նպատակի մը կը ծառայեն : Հասկը- ցրնել ազուն օգտակարն ու պիտա- նին, անոր ուսած ամէկ մէկ նիւթին մէջ իր անձին օգուտը ցուցնել, անկէ շահ մը նախատեսել տալ իրեն, որով աւելի հետաքրքրաշարժ կը գտնայ գաղափարութիւնը : աշակերտը կը ստիլի որովհետեւ ճշմարտ է, հա- ճելի ու օգտակար միանգամայն :

Ուսուցչական ժողովներ ալ հաստա- տուած են ուր իր բարձրագոյն գոտախօս կերպով մը իր գաղափարութեանց համարատուութիւնը կրնէ, ուր կը վիճարանին մեթոտներու եւ սկզբ- բունքներու վրայ : Ուսուցչական ժո- ղովներուն աւելի զարկ տալու եւ ա- լելի օգտակար ընելու համար գա- նունք, վալժարանին ուսուցչական խումբը հրաւիր զրկած է եզեր քա- զաքին բոլոր ուսուցիչներու եւ ձե- ողնհաս անձերու, որպէս զի ընդհ. ուսուցչական ժողով մը գումարեն եւ տեսակ մը ընդհ. ծրագիր պատրաս- տեն վառնայի բոլոր կրթական հաս- տատութեանց մէջ գործածելու հա- մար : Գժարատարար մինչեւ այսօր սչ ոք փափագ յայտնած է մասնակ- ցելու :

Ստեփան վառնայի Ազգ. վարժա-

րանին ուսուցչական խումբը ան- շուշա թոյլատուութիւն պիտի բնէ ինձի գիտողութիւն մը բնեւեւ, զոր շատ կարեւոր կը նկատեմ : Այնչեւեւ մը երբ առաջին անգամ վար- ժարան գայ, շատ ակուր ապուս- րութեան առկ պիտի մեկնի տեսնե- լով աշակերտներուն, հաղուապիտ բացատրութեամբ, սարապոյման ազատ- տութիւնը ձեռքբերուն, գէմքին եւ զգեստներուն : Հաւանականաբար ու- սուցիչներու աշխատութեան ծանրու- թիւնը արգելիք կ'զած է աւելի շատ զրազելու անով : Բայց ես յօժարա- կամ պիտի գոհնի առօրեայ գոտախօ- սութիւններէս երկու ժամ, խաւի հակելու համար աղօց մաքրութեան վրայ : Փոփոխելի էր միանգամայն որ, ուսուցչական ամենամօտ ժողովի մը մէջ, վիճարանութեան նեթար- կուէր այս կէտը ու միջոցներ որոշ- տէր պէտք կ'զած հակադրութիւնը կա- տարելու համար :

Երբ միտքս կուզայ Պոլիսրիոյ միւս հայ վարժարաններուն սիրայի վիճակը, երանի կուտամ վառնայի- ներուն, որոնք իրարմէ գերազանց ազգային ու անհասական կրթական հաստատութիւններ կը պոհեն, եւ ուր կրթական զովելի մրցում մը սկսած է նշմարուիլ ազգայիններուն միջեւ : Միւս քաղաքներուն կը մնայ հետեւի վառնայի օրինակին :

ԼԵՒՈՒ ՍՍՐԳՍԵՍՆ

ՆՅՄ ԱՅ ԽՄՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Տէր նմ ազգի,

Անցեալ շաբաթ օրուան «Ի- րաւունք»-ի «Վառնայի թաղա- կանութիւն» խորհրդով առաջ- նորդող յօդուածին մէջ, աչ- գային վարժարաններուն մասին ալ խօսելով, ըստած էր թէ ու- սուցիչները անյայտ ազբիւրներէ կ'առանան իրենց ամսականները, թէ անոնք «ամէն ջանք ի գործ կը դնեն իրենց պաշ- օնին մէջ չլծերանալով իրենց «անկուտի»- ութիւնը ծածկելու», եւ թէ քիչ վերջը հոգաբարձութիւնը ան- կարող պիտի ըլլայ վճարումներ ընել :

Մեզի չվերաբերի պարզել, թէ հոգաբարձութիւնը ի՞նչ աչ- բիւրներ ունի վարժարանի պիւտեմէն գոցելու համար : Բայց ճշմարտութիւնը պարտք կը դնէ մեր վրայ հրապարակով յայտնել թէ անիկայ մընչեւ այսօր շատ կանոնաւոր եւ զոհացուցիչ կերպով կատարած է իր վճարումները եւ ուսուցիչներէն ոմանց կանխա- վճար իսկ ընելու առաւելութիւնն ունեցած է :

Հետեւաբար կը խնդրենք «Ի- րաւունք»-ի պատուարժան խըմ- բագրութեանն որպէս զի աւ- կէ վերջ անմիջապէս հաւատք չընձայէ անցորդներու տուած տեղեկութեանց եւ չիւղաթիւրէ ամէն յայտնի իրողութիւնները : Խնդրելով որ հաճիք ներկայս հրատարակել ձեր թերթին մէջ :

Կը մնանք յարգանքով, ի զիմաց Վառնայի Ազգ. երկուսեւ վարժարաններու

Ատենապարտ Ատենապիտ Վ. Մանուկեան Վահան Ծահրիւսան Վառնա, 22 Փետր. 99

(—)(—)

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԴԵՊԹԵՐ

Կ Ի Է Տ Է

Կրեաէի Ազգ. ժողովին հաւա- նութեան նեթարկուելիք Սահ- մանադրական օրէնսդրութիւնը, Յունականին եւ Արեւել. Բուսնիի սահմանադրական ծրագրին վրայ ձեւուած է, բայց աւելի պահպա- նողական կերպով, ընդ ամենը 110 յօդուածէ կը բաղկանայ, որոնց մէջ ամէն ջանք եղած է կղզւոյն կառավարչին կարելի կ'զածին շափ լայն ու հզօր իշ- լանութիւններ ու իրաւունքներ տալու :

—Եւրոպական շրջա պատաս- խանատու տէրութիւնները դի- տաւորութիւն ունին քննիչ յանձ- նաժողով մը կ'ազմել Հոռոմի մէջ, ծովակալ Գանուլաօօի նախագա- հութեամբ, մօտէն հակելու հա- մար կղզւոյն վարչութեան վրայ :

Ալպանական պետերու նոր ժո- ղով մը տեղի ունեցեր է Տիպրէի մէջ, Աստիցմէ մին Սէլիմ Բուսօ, անգամ կարգուեր է Իբէքի գոր- ծաղիք քովի թէին :

—Բ. Գուռը Մէհմէտ Բէհպի փաշան նշանակած է իբր պատ- ուիրակ թուրքեպուլիար սահմա- նազլիսին կարգադրութեան հա- մար կատարուելիք բանակցու- թեանց :

ՓԻԼԻՊԻՆՆԻ ԿՂՁԻՐ

Մանիլայէն եկած լուրերը իրա- բու բոլորովին կը հակասեն : Մէկ կողմէ հրամանատար Օթիլի կը հեռագրէ թէ շատ անձուկ վիճա- կի մէջ կը գտնուի, եթէ կարելի եղածին շափ շուտ օգնութիւն չի հասնի : Միւս կողմէ «Մօրնիկ Բօսթ» կիմացնէ թէ Ակենայտօ պատգամաւորութիւն մը զրկած է Օթիլին հարցնելու համար որ ի՞նչ պայմաններով պիտի ըն- գունի իր եւ իր 8,000 մարդոց անձնատուր ըլլալը : Յայտնի կե- րեւայ որ Լացու թիւնը այնքան հանդարտ չէ կղզիներու մէջ, որքան կուզեն ցոյց սալ Ամբրի- կայիք :

—Իէֆօրմա թերթը կը գրէ թէ 30 թնդանօթներ, 30,000 հրա- ցան եւ բազմաթիւ փամփու շտեր ձարոնէն Մալալու զրկուած են :

—Վապրատոր» շոգեկուր որ Հալիֆարսէն կուգար Լիվրբուլ, եւ որուն մէջ կը գտնուէր Ակօն- սիլօ պատուիրակը Մաքէնդիի առջեւ ժայռերուն զարնուելով, ընկղմեր է : ձամբորդներն ու նաւատիները աղաւտեր են :

—Մանիլայէն փետ. 28 թուակա- նաւ կը հեռագրէ թէ, նոյն օրը կատարեալ պատերազմներ տեղի ունեցեր են : Բաւական քաղաք- ներ կղզեցիներուն ձեռքը ան- ցած է որոնք 800 ամերիկացի զերի բռնած են : Ապտամբ- ները երբեք անձնատուր ըլլալու գիտաւորութիւն չունին եւ որո- շած են մինչեւ վերջը կուտել :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Կայսերական նոր Ուրալ մը ֆինլանդիոյ առանձնաշնորհալ գրքութիւնը կայսրութեան միւս նահանգներուն համահասարակ վիճակի մը կը վերածէ: Գինլանդիոյ մինչեւ այսօր Ռուսիոյ միակ նահանգն էր որ սահմանադրական վարչութեամբ մը կը կառավարուէր, ունենալով իր առանձին օրէնսդրութիւնը, իր Ծերակայտը, իր երեսփոխանական ժողովը, իր յատուկ գրամը եւ տուրքերը: Այս գրքուն սկիզբը Ազգ. քսանդր Ա. խոստացած էր պահել ֆինլանդիոյ ինքնավարութիւնը. իր յաջորդները կերպովն է կը ստորագրէին դա՛ն ելած առեւնին, նոյն խոստումը պահելու համար: Նիքոլայ Բ ալ նոյն երդումն ըրած էր:

Ձուր ֆինլանդացիք դիմումներ կընեն, պատուիրակներ կը շրջեն իրենց հին վարչութիւնը պահպանելու համար: Ձարը մերժած է զանոնք ընդունել: «Մի ստիպէք որ խիստ միջոցներու գէ՛մ ըսեր է:

Տանիմարքաի. Շուէթի և նորվեգիոյ մէջ մեծ յաղում պատճառած է Ձարին այս ուրաղը: Թերթերը կը գրեն թէ այս երեք տէրութիւնները պիտի մերժեն իբր բողոք, մասնակցիլ զէնընկեցութեան վեհաժողովին:

— Բեթրսպուրկի համալսարանին ուսանողները սովորութիւն ունին, համալսարանին սօնին առթիւ զանազան ցոյցեր ընել: Այս տարի համալսարանին վարիչը զգուշական միջոցներ ձեռք առած էր, որոնք երիտասարդ ուսանողներուն արժանապատուութիւնը վիրաւորած էին:

Այս առթիւ ուսանողական դումարումներ տեղի ունեցան և անկարելի եղաւ ուստիկաններու եւ ուսանողներու մէջ կատարուած ընդհանրումներուն առաջին առնել: Ուսանողները ձիտոր ուստիկաններէ հալածուած, յափշտակեցին աւելածունքու գործիքը և սկսան ձեծկուիլ ուստիկաններու հետ: Երկու կողմէն ալ մեծ թուով վիրաւորեալներ կան:

Բեթրսպուրկի այս ուսանողական շարժումները արձագանգ գտած են բոլոր բարձրագոյն դպրոցներու և Գիէվի, Խարքովի ու Մոսկուայի ուսանողներուն մէջ, որոնք կը մերժեն հետեւիլ դասախօսութեանց, մինչեւ որ Ս. Բեթրսպուրկի ուսանողներուն գոհացում չի տրուի ուստիկաններու կողմէ անոնց նկատմամբ ի գործ դրուած անվայել ընթացքին փոխարէն:

Ուստիկանները վարժարաններու գրան առջեւ կը սպասեն և ներկայացող ուսանողներուն առնունք արձանագրելով մտից տոմսերը ետ կառնեն: Կըսեն թէ Բեթրսպուրկի ուստիկանագետը, մասամբ պատասխանատու նկատուելով այս խառնակութեանց, պիտի հրաժարեցուցուի:

ուելով այս խառնակութեանց, պիտի հրաժարեցուցուի:

Ք Ո Ւ Պ Ա

Քուպաի ազգ. ժողովը Մառլանոի մէջ գումարուելով, Կոմէցի պաշտօն յանձնեց է Վաշինկիթըն ելթալ ամերիկեան պետութեան պահանջելու համար կղզոյն մերիկեան գրաւումին դադարիլը, տեղական կառավարութեան մը անմիջական հաստատումը և Մ. Նահանգաց օգնութիւնը կղզոյն ելեւմուտքին վերակազմութեան համար:

Պատուիրակը Ամերիկայի պիտի զգացնէ թէ քուպայիք իրեն օգնութիւնն ու պաշտպանութիւնը կը խնդրեն, և ոչ թէ միջամտութիւնը: Սանթիակոի գումարին մէջն է որ ամերիկեան գրաւումն երկարուած ամենէն աւելի գէշ տպաւորութիւն ձգած է: Բազմաթիւ միթիւններ կազմակերպուեր են և որոշեր են անդական կառավարութիւն մը հաստատել, զոր եթէ ամերիկացիք չընդունին, անկախութեան կռիւը պիտի սկսի:

— Քուպաի կռիւներուն ժամանակ գերմանացիներու կրած զնաւը կը հասնի չորս միլիոն մարքի: Ամերիկեան կառավարութիւնը մտադիր չէ շատ դիւրութեամբ վերոյաշեալ գումարը տուժելու:

ՁԷՆԸՆԿԵՑՈՒԹԻՒՆ

Ռուսիոյ Լինտոնի գեսպանը, պարոն Սիլալ, իր տէրութեան կողմէ Լահէյ գումարուելիք զէնընկեցութեան համաժողովին լիազօր պատուիրակ կարգուեր է:

— Պիւլոֆ, Գերմանիոյ արսաքին գործոց նախարարը, զէնընկեցութեան մասին հարցապնդումի մը պատասխանելով ըսեր է թէ, քիչ ժամանակէն հաւանական է որ հրաւիրագրերը զԵՐԿուին Լահէյ գումարուելիք ժողովին համար, թէեւ տակաւին ճիշդ թուականը չէ որոշուած: Յետոյ աւելցուցեր է թէ ռուս կառավարութիւնը մասնաւոր կէտեր սրոշած է որոնց մասին միայն իւրաքանչիւր տէրութիւն իր կարծիքը պիտի յայտնէ համաժողովին մէջ:

ԼԷՕՆ ԺԿ ՊԱՊԸ

Հռոմի պապը, Լէօն ԺԿ որ իննսունը անցած է, այս միջոցին ծանրապէս հիւանդացած է: Այս պատճառաւ, իր գահակալութիւնը շնորհաւորելու եկած գեսպաններն ու պատգամաւորութիւնը չի կրցան ընդունիլ:

«Թան» խմբագրականի մը մէջ կըսէ թէ եթէ այս միջոցին պապը վախճանէր, անխոստափելի տաքնայ մը պիտի սկսէր պապական եկեղեցւոյն և քրիստոնէութեան մէջ, որ ալ աւելի ծանր հունգամանք պիտի ստանար կարգ մը խնդիրներու պատճառաւ, որովհետեւ իր մահը լոկ անձի մը կորուստը չի պիտի ըլլար, այլ սմբողջ քաղաքականութեան մը զոր Լէօն ԺԿ կարողացաւ այնքան ճարպիկութեամբ թեւաւորել: Այս առթիւ Լէօն ԺԿ-ն օգնութիւն խնդրող գրութիւններ կը հասնէր Բարլէն ու Սզերգէն օգնութիւն խնդրող գրութիւններ կը հասնէր Գրաւմաթիւն: Ստորիարքարանէն կը խնդրուէր կը հասնէր Պատրիարքարանէն շատ նշանակալից զանազաններու հետ շատ նաեւ վաճառականներու հետ հաղորդակցութեան մասնաւոր է ցորին, այլ նաեւ վաճառականներու հետ հաղորդակցութեան մասնաւոր է ցորին, այլ նաեւ վաճառականներու հետ հաղորդակցութեան մասնաւոր է ցորին:

ճառաւ, որովհետեւ իր մահը լոկ անձի մը կորուստը չի պիտի ըլլար, այլ սմբողջ քաղաքականութեան մը զոր Լէօն ԺԿ կարողացաւ այնքան ճարպիկութեամբ պատշաճեցնել բոլոր քրիստոնեայ պետութեանց ձեռք տուժներուն հետ:

Ք Ր Ո Ն Ի Կ

Հայաստանի մէջ սովը հետզհետէ սաստկանալու վրայ է: Վանէն զատ, Բարլէն ու Սզերգէն օգնութիւն խնդրող գրութիւններ կը հասնին Պատրիարքարան: Ղրկուած նպատակները շատ չնչին քանակութիւն մը կը կազմեն բազմամամբ պահանջքին մեծութեան: Սմբողջ գրկուած նպատար 3—400 տոկի միայն կը հասնի ցորգ: Այս առթիւ «Բիւզանդիոն» կըսէ թէ, պէտք չէ որ սմ գրկելով բաւականանալ, այլ նաեւ վաճառականներու հետ հաղորդակցութեան մասնաւոր է ցորին, այլ նաեւ, հաճախ, կորեկ, գետնախնձոր գրկելու միջոցներ հայթայթելու համար:

— Վանայ առաջ. տեղապահ Տ. Ստեփան Վրգ. Ազաղատեան, հեռագիր մը զրկած է Պատրիարքին ծանուցանող թէ, այն ազգայինները որոնք գաւառափոխ եղած էին, հիմակ ալ խումբ խումբ մայր եկեղեցւոյ ծոցը կը դառնան: Կը յուսացուի որ նորանոր նպատակներու և կարող հովիւ մը առաքումը պիտի կարողանայ այս խնդիրը բոլորովին կարգադրել:

Սակայն սմանք կը կարծեն թէ՛ Ազաղատեան վրգ. այս հեռագիրը չափազանցութիւն մըն է իր կղմէն, իր վրայ ծանրացող պատասխանատուութիւնը թեթեւեղութիւնը համար ստեղծուած: Ուստի Պատրիարքարանէն կը խնդրուի աւելի ճշգրիտ ու մանրամասն տեղեկութիւններ պահանջել:

Նաեւ Յուրնուղի և Ալպիսթանի ազգ. հոգեւոր իշխանութիւնները ազգայնոց խնդր ու անկարող վիճակը նկարագրելով նպատակ կը խնդրեն: Ալպիսթանցիք իրենց վարժարանին համար դասագիրք ու դպրոցական պիտոյքներ խնդրած են: Բայց, ինչպէս մեր Պոլսոյ թղթակցութիւններէն կը տեսնուի, Ս. Պատրիարքը աւելի իր փորով ու գրպանով կը զբաղի քան թէ Հայաստանի կարօտեալներուն վիճակով:

— Կրօնական ժողովը մերժեր է ներսէս Եպս. Ասլանեանի հրաժարականը Վանայ առաջնորդական պաշտօնէն: Ներկայ շարժում մէջ Բ. Գուրբէ Մելքիսեդէկ Եպս. Մուրատեանի և թէ ներսէս Եպս. Ստեղծողական պէրաթները պիտի յանձնէ Պատրիարքարանին:

— Այս տարի Ս. Էջմիածնի Գէ.

որգեան ճեմարանին բացման 25ամեակը լրանալուն համար, հոգեւորական ասպարէզին մէջ մտած շրջանաւարտները կը պատրաստուին արժանաւորապէս առնել այս տարեգարձը: Այս առթիւ ճեմարանի ընթացաւարտներուն խնդրանք Տ. Վահրամ Եպս. Մանկունի ճեմարանին հաստատութեան պատմութիւնը պատրաստած է, որ տպագրուելով պիտի բաշխուի նոյն օրը և հասոյթը պիտի յատկացուի Ս. Էջմիածնի:

— Անցեալ կիրակի շքեղ երեկոյթ մը տեղի ունեցեր է Շուէթլայի մէջ: Ազգային զանազան նիւթերու վրայ ճառախօսութիւններ կատարուեր և երգեր երգուեր են: Երեկոյթը լաւ տպաւորութիւն թողած է սահասարակ ներկաներուն վրայ:

— Բարիդի մէջ ալ Ուսանողներու Ակումբը շքեղ երեկոյթ մը տուեր է, ի ներկայութեան հայ ուսանողներու և ստարներու: Այս մասին մեր յաջորդ թուով, թղթակցութիւն մը պիտի հրատարակենք:

ԹԱՏՐՈՆ

Վազը գիշեր Անկէլ Սլափովի սրահին մէջ պիտի ներկայացուի Վարդան Մամիկոնեանի ողբերգութիւնը, հայ դերասանական խումբին կողմէն:

Ներկայացումէն ետքը պարահանգէս մը պիտի տրուի:

ՕՒՆԱՐԻ ԹՈՒՂԹ

Տիար Տիգրան Տումանեան կը ծանուցանէ թէ ի ֆ. Պոլիս Քուրչուն խանի դիմաց, կը վաճառէ Ազգ. Հիւանդանոցի ամենէն ընտիր նոր տեսակ սիկարի թուղթէն, զեղևալ գիտերով մեծաքանակ և փոքրաքանակ: Բարեկործութիւնը և շահը կը պահանջեն որ ամէն հայ գործածէ զայն: Կան նաեւ Պօն, Վոլթօ եւ ուրիշ ամէն տեսակ թուղթեր: Բանձնարարութիւնք կը կատարուին ճրջաբա և փութով:

3—10

ԽՄՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորում, հասցեւորում, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ, ինչպէս նաեւ պրօշիւռներ:

Գիներն յոյժ գիւրամտոյշելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

« Շ Ա Ր Ժ Ո Ւ Ս »

Վառնաի մէջ կը վաճառուի Մուսալա, Ապտիւրրահման մզկիթին զէմը հայկական գրատուր. Ա. Ջարպահանէլեանի քով:

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница «Взаимность» Варна.